

ՆՈՐԱՀԱՅՏ ՏՈՂԵՐ ԴԱՎԹՅԱՆ ՔԵՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Գեռևս V դ. Մեծորպ Մաշտոցի աշակերտներից Դավիթ Քերականը, որը հայտնի է իբրև Դիոնիսիոս Քրականացու Քերականության թարգմանիչ և մեկնաբան, գրել է նաև պատմա-հայրենասիրական մի մեծածավալ պոեմ: Այն չի պահպանվել. փրկվել են միայն առանձին տողեր: Մասնագետները վաղուց նկատել ու զբաղվել են այդ տողերի ուսումնասիրությամբ: Մենք ևս առիթ ենք ունեցել անդրադառնալու դրանց, ինչպես նաև՝ առհասարակ Դավթյան քերթության մասին պահպանված տեղեկություններին¹, փորձելով ի մի բերել V դ. հեղինակ Անանուն Քերականի Մեկնության մեջ գտնվող համապատասխան վկայությունները²: Դրանց ընդհանուր քանակը կազմեց վեց տող, որոնցից շորսն առնված են պոեմից, իսկ երկուսն ունեն խորագրային բնույթ:

Այժմ կրկին անդրադառնալով Դավթյան քերթությանը, համոզվեցինք, որ Անանուն Քերականի նշված Մեկնության մեջ հիշյալ ստեղծագործությունից³ առկա են նաև հետևյալ երեք տողերը.

1. Այլ և ի նաշխահաժահութենէն անդ եթե ոք հասանիցէ:
2. Բոլոր իր և փոքրագոյն ի տերութեանն ընդ արեգակն՝ էանց:
3. Ի տրամաբանելն ընդհանուր երկրի ածողեալ զնա⁴:

Արդ, ի՞նչ հիմքեր կան պնդելու, որ այս տողերը պատկանում են Դավիթ Քերականին:

Նկատենք, որ դրանցից առաջինը դեռևս Ղ. Ալիշանը, իր ժամանակին, ենթադրաբար համարել է Դավթյան քերթության բեկոր: Սակայն նա, տեղյակ չլինելով սկզբնաղբյուրներին, այդ ենթադրությունը հավաստող որևէ փաստ չի բերել, այլ օգտվել է ուշ ժամանակների հեղինակներից: Այդ պատճառով էլ Ղ. Ալիշանից հետո ոչ ոք այլևս նշված տողը չի համարել Դավթյան քերթության մաս: Մենք ևս մեր վերոհիշյալ հողվածում այն դիտել ենք որպես անհարազատ տող և դուրս ենք թողել ընդհանուր հաշվից: Այժմ, սակայն, երբ համադրեցինք Անանունի Մեկնության մեջ հանդիպող այդ և նրան հաջորդող մյուս երկու տողերը, համոզվեցինք, որ դրանք բոլորն էլ առնված են Դավթյան քերթությունից: Հետևաբար, Ղ. Ալիշանի ենթադրությունը հավաստի է:

¹ «Դավթեան քերթութիւն որ յաղագա Տիգրանայ» երկը և Տիգրան Երվանդյան վեպը» («Բանբեր Երևանի համալսարանի», 1972, № 1, էջ 64—81):

² Ն. Ա. Պոսնց, Արուեստ Դիոնիսեայ քերականի և հայ մեկնութիւնք նորին, Պետրոգրադ, 1915, էջ 125—156:

³ Նույն տեղում, էջ 137:

⁴ Տողատակերում զետեղված տարբերակների օգնությամբ հիշյալ տողերում կարող ենք կատարել երկու կարևոր ճշգրտում. առաջին տողի «նաշխահաժահութենէն» բառի տարբերակները նախընտրելի է պաշխարհաժողովութենէն» ձևը, իսկ երրորդ տողի «տրամաբանելն» բառի տարբերակները՝ «տրամատել»-ը:

Ամենազխալորը, սակայն, նշված տողերի տաղաչափության առանձնահատկությունն է: Ուշագրավ է, որ դրանք մեջ են բերված հոմերոսյան տողերի փոխարեն՝ որպես տաղաչափական համարժեքներ: Ըստ որում, շափական ոտանավորի և հատկապես հեքսամետրի այն պահանջները, որոնք բավարարվել են հոմերոսյան տողերով, Անանունի երկում փոխարինվել են քննվող տողերով: Այս իրողությունը ցույց տալու նպատակով դեմ-դիմաց ընդօրինակենք նախ Դիոնիսիոս Թրակացու համապատասխան պարբերությունները՝ Հոմերոսի տողերով, ապա Անանունի քերականի պարբերությունները՝ հայ հեղինակի տողերով (առնված են «Յաղագս հասարակ շղաշարաց» բաժիններից):

Դիոնիսիոս Թրակացի

Անանունի քերական

<1> Յորժամ ի ձայնաւոր երկայն յանգիցի և զհետինն ունիցի ի ձայնաւորէ հաւացեալ, որդան «Ինձ բնաւ ես ոչ զու իրի՞ պատճառ, առև, այլ աստուածօ՛քն»:

<1> Յորժամ ի ձայնաւոր երկայն հանգիցի և զհետինն ունիցի ի ձայնաւորէ հաւացեալ, որդան «Այլ և ի նաշխաճածաճուրքե՛նէն անզ երբ ո՛ք հասանիցէ»:

<2> Կամ յորժամ աղաւտի և աղաւտացելոյ ձայնաւորի վերաբերեցին երկու ձայնորդք, որոց երկրորդն նայ է, իսկ առաջնորդն ըստ եզ անձայն, հիզան «Պատրոկղէ ինձ ճի՛քիս կարի յոյժ սիրեցեալ անձի՛ն»:

<2> Եւ կամ յորժամ աղաւտի կամ աղաւտացելոյ վերաբերեցին երկու ձայնորդք, որոց երկրորդն նայ է, իսկ առաջնորդն ըստ եզ անձայն, հիզան, «Թողո՛ր ի՛ր և փո՛քազոյն ի տերութեանն ընդ արեգակն՝ էանց»:

<3> Կամ յորժամ սուզ իցէ և եզերիցի ի մասն բանի և զհետինն ունիցի ի ձայնաւորէ հաւացեալ, որպիսի «զնստոր ոչ խաբեաց խաչին բեպէտ և յումպ էր»՝:

<3> Եւ կամ յորժամ սուզ իցէ և եզերիցի ի մասն բանի և զհետինն ունիցի ի ձայնաւորէ հաւացեալ, որպիսի «Ի տրամաբանելն ընդհանուր երկրի ածողեալ զեա՛ծ»:

Այս զուգադրությունը հուշում է գտնել այնպիսի հեղինակ, որով Անանունի քերականը կկարողանար փոխարինել Հոմերոսին: Իսկ այդպիսի հեղինակ հայտնի է դառնում հենց Անանունի Մեկնության «Յաղագս վերծանութեան» բաժնից, ուր կրկին հանդիպում ենք զուգադրման. միայն թե այստեղ և՛ հույն, և՛ հայ հեղինակների անունները հայտնի են: Դրանցից առաջինը Հոմերոսն է, իսկ երկրորդը՝ Դավիթ բանաստեղծը: Ահա այդ համապատասխանությունները.

Դավիթ քերական

Անանունի քերական

Եւ զտաղն քաջութակի] Յող ասի համբաւկանն, յորժամ յարմար բառիւք և ոլորակաք ի սկսմանէ մինչև ցլանկումն զմիտս կատարեալ բերիցէ և զչափան:

Եւ զտաղն քաջութակի] Իսկ քաջութակի տաղ ասի Դաւթեան քերթութիւն որ յաղագս Տիգրանայ, յորժամ երկար բառիւք և ոլորակաք ի սկսմանէ մինչև յաւարտումն զմիտս առեալ բերիցէ, որպէս յորժամ ասէ:

5 ն. Ա դ ո ն ց, նշվ. աշխ., էջ 11—12:

6 նույն տեղում, էջ 137: Ուշագրավ է, որ Դավիթ քերականը, իր Մեկնության մեջ (նույն տեղում, էջ 98—100) թեկուզ և փոխել է Դիոնիսյան ձևակերպումները, բայց Հոմերոսի տողերը պահել է: Անանունը, սակայն, կրկին է Դիոնիսիոսին, իսկ Հոմերոսի տողերը փոխարինել իր ուսուցչի՝ Դավիթ քերականի պոեմի տողերով:

«Եւ արդ ներգործող ի միտս երկիր առ
խորհուրդս փողարին
Մեծոգոյ Տիգրանայ գեղանին Տիգրանուհի
Իւր ներածեալ կողարաղ նաև ողջամիտ աշ-
խարհածուհի»:

Ի այդ ասի և ուրբակ տազ, յորժամ առա-
ջարկութիւն մտացն երկարագոյն իցէ, երկ-
րորդ տազին սկիզբն ի բաղաձայնից և կամ
ի կրկնակաց հաւիցի, զի զանգայան և զմե-
ծասարն զործիցէ երկայն. իսկ մեծավերջն
վասն երկայնութեան ձայնին սահմանեցաւ
ոգրերգակին⁷:

Արդ տաղ ասի դա, վասնզի առաջարկու-
թիւն մտացն յառաջնումն տաղուն ընդ եր-
կարագոյն գոյով, երկրորդ տաղին սկիզբն
առնելով ի կրկնակէն արար հանդերձութիւն
և զանգայտն և զմեծասարն երկայն զործեաց
և զտրամախոհութիւնն եից յերկրորդումն տա-
ղունս⁸:

Այս համապատասխանութիւնը, ինչպես նաև տաղաչափական առանձ-
նահատկութիւնները հավաստում են, որ քննվող երեք տողերի հայ հեղինակի
խնդիրը լուծված է: Իսկ որ իրոք Դավիթ Քերական-բանաստեղծից փրկված
պարբերութիւններում առկա են հունական տաղաչափութիւն կանոններով
գրված տողեր, նկատել է նաև Գ. Զահուկյանը⁹: Մեր որոնումները համոզում
են, որ դրանք, ինչպես նաև քննվող երեք տողերը գրված են ոչ միայն չափա-
կան ոտանավորով, այլև հոմերական տաղաչափութիւնով կամ հեքսամետ-
րով¹⁰: Այժմ ուշադրութիւն դարձնենք Դավթյան քերթութիւն վերահիշյալ
տողերին նվիրված մեկնաբանութիւններին, ուր խոսվում է միմիայն հունա-
կան տաղաչափութիւն կանոնների մասին և փաստարկվում հոմերոսյան տո-
ղերով (կամ նրանց հայկական համարժեքներով): Իսկ որ Դավթյան քերթու-
թիւն հին ու նորահայտ տողերը միևնույն ամբողջութիւնից են առնված,
պայացուցվում է նրանց լեզվա-ոճական առանձնահատկութիւններով:

Հետաքրքրական է նաև այդ տողերի բովանդակութիւնը: Հայտնի է, որ
Դավթյան քերթութիւնից ծանոթ հատվածում խոսվում է Տիգրան Առաջինի և
Աժդահակի խնամախոսութիւն մասին, առանձին փրկված համապատասխան
մի այլ տողում՝ թագավորութիւնը Մարաստանից Պարսկաստան տեղափո-
խելու մասին և խորագրային բնույթ կրող տողերը հավաստում են, որ ստեղ-
ծագործութիւնը նվիրված է Տիգրան արքային, իսկ նրա հեղինակ Դավիթն էլ
այդ երկում նկարագրել է զգպատերազմն մարաց և հայոց»: Այս հիմքի վրա
Նորահայտ տողերը հասկացվում են գեթ ընդհանուր գծերով: Այսպես, առա-
ջին տողում խոսվում է զորածողովի, երկրորդում՝ ինչ-որ պետութիւն (ան-
շուշտ, մարական)՝ անկման, կործանման, իսկ երրորդում՝ հերոսի (անշուշտ,
Կյուրոսի) հաջողութիւնների մասին: Ինչպես տեսնում ենք, նոր տողերը
իրենց բովանդակութիւնով ոչ թե հակասում են նախորդներին, այլ յուրովի
լրացնում են նրանց մտքերը: Հետևաբար, ցանկութիւն դեպքում անգամ հնա-
րավոր չէ նորահայտ տողերը վերագրել որևէ այլ հեղինակի, որովհետև հիշյալ
ժամանակներից (V դ. առաջին կես) մեզ հայտնի միակ հայ բանաստեղծը,
որ գրել է աշխարհիկ բովանդակութիւնով պատմական պոեմ՝ եղել է Դավիթ

7 Ն. Ա դ ո ս ց, նշվ. աշխ., էջ 89:

8 Նույն տեղում, էջ 128—129:

9 Գ. Զ ա հ ու կ յ ա ն, Քերականական և ուղղագրական աշխատութիւնները հին և միջ-
նադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 93:

10 Այդ հարցի մասին ունենք առանձին հետազոտութիւն պատրաստ տպագրութիւն:

Քերականը: Ըստ որում, նա միակն է նաև, որ տաղաչափությամբ և դյուցազ-ներգություններով փորձել է հետևել Հոմերոսին:

Ուշագրավ է, որ Անանուն Քերականը Դավթյան քերթության տպավորության տակ է գտնվել ոչ միայն վերոհիշյալ մեջբերումները և նշումները կատարելիս, այլև քերականական կանոնների բացատրության ժամանակ: Այսպես, մի առիթով նա մեջ է բերում «Տիգրան Երուանդեան և Տիգրան Արտաշեսեան» դարձվածքը¹¹, որտեղ նկատի են առնված մի կողմից Դավթյան քերթության հերոս Տիգրան Երվանդյանը, իսկ մյուս կողմից՝ Արտաշես Առաջինի որդի Տիգրան Երկրորդը:

Մեր նախորդ հոդվածում փորձել ենք ի մի բերել Անանուն Քերականի Մեկնության մեջ պահպանված վկայությունները Դավթյան քերթության մասին, ինչպես նաև՝ նրանից առնված տողերը: Այժմ դրանք ներկայացնում ենք նոր լրացումներով: Այստեղ որոշ պայմանականությամբ տեղ ենք տալիս նաև «Տիգրան Երուանդեան և Տիգրան Արտաշեսեան» դարձվածքին, զետեղելով խորագրային-բնութագրական այն երկու տողերից հետո, որոնք արդեն հայտնի էին: Այդ երեք տողերն ընդգծում ենք, որպեսզի տարբերվեն պոմից առնված մյուս յոթ տողերից: 8 և 10-րդ տողերում ընդգծված բառերը՝ վերեվում նշված ճշգրտումներն են.

1. Դարթեան քերթութիւն որ յազգա Տիգրանայ:
2. Դալիք շարադրեաց գալտեբազմն մարաց և հայոց:
3. Տիգրան Երուանդեան և Տիգրան Արտաշեսեան:
4. Եւ արդ ներգործող ի միտս երևիր առ խորհուրդ փողարին
5. Մեծոգւոյ Տիգրանայ զեղանին Տիգրանուհի
6. Իւր ներածեալ կողաբաղ նաև ողջամիտ աշխարհածուհի...
7. Փոխատեղեցին ի Պարասս զՄարային թագաւորութիւն...
8. Այլև ի նաշխարհաժողովութենէն անդ եթե ոք հասանիցէ:
9. Բոլոր իր և փոքրագոյն ի տերութեանն ընդ արեգակն՝ էանց:
10. Ի առամատելն ընդհանուր երկրի ածողեալ զնա:

Այստեղ ավելորդ չենք համարում նշել, որ Դավթյան քերթությունը ծառայում է եղել նաև Մովսես Խորենացուն, որը հիշատակելուց բացի, վերաշարադրել է նրա որոշ դրվագները¹²: Մեր նախորդ հոդվածում արդեն ցույց ենք տվել դրանց և Դավթյան քերթության փշրանքների անժխտելի առնչությունները: Այժմ այդ առնչությունների հզրերը ընդլայնվում են, երբ հաստատվում է «Տիգրան Երուանդեան» արտահայտության առկայությունը նաև Անանունի երկում: Այսպիսով, հնարավորություն է ստեղծվում գտնելու նաև այն բեկորները, որոնք տեղեկություններ են հաղորդում Տիգրան Առաջինի և նրա հոր՝ Երվանդ Առաջինի մասին: Այս առումով ուշագրավ եզրեր հայտնվեցին նշված փշրանքների և վարդգես Մանկան մասին պահպանված վիպական հատվածի միջև¹³: Մնում է կատարել նոր որոնումներ և ավելի հոգատար ու հանգամանալից քննությամբ խորանալ նշված և շնչված բոլոր մասունքների ու վկայությունների էություն մեջ, որոնք լույս են սփռում մեր ժողովրդի հեռավոր ու այնքան մշտնջող ժամանակների պատմության վրա:

11 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 144:

12 Մովսեսի Խորենացույ Պատմութիւն հայոց», Տիգրիս, 1913, էջ 72—85:

13 «Դիտողություններ «Վարդգես Մանկան» վիպական հատվածի վերաբերյալ» («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 2, էջ 215—232):

НОВЫЕ СТРОКИ ИЗ ДАВИДОВОЙ ПОЭМЫ

А. Ш. МНАЦАКАНЯН

Резюме

Известно, что в V в. поэтом Давидом Грамматиком была написана большая, не дошедшая до нас историко-патриотическая поэма, посвященная Тиграну I (VI в. до н. э.). Четыре строки этой поэмы сохранились в Толковании грамматика Анонима, жившего в V в. н. э. В данном произведении Анонима сохранились еще три строки из поэмы Давида; представляет интерес упоминание Анонимом Тиграна Еруандяна и Тиграна Арташесяна; Тигран Еруандян является героем Давидовой поэмы — Тиграном I.